որ կապուած է թեթեւակի յետեւի կողմից. զօտիկի գագաթն էլ զարդարուն։ Երեւում են նրանց ներքնազգեստի նեղ թեւերը, բազկի մօտ աւելի սեղմուած. ներքնազգեստի վերայից ձգուած է բարակ և արձակ վերնազգեստ։ Գմբեթի տակի կինը գլխին նոյն զօտիկն ունի. միայն պարանոցի տակից կապուած է մի լաթով, իսկ լաչակն իջնում է ուսերի վերայ։ Աղջիկների գլխի կապն ու զարդը յիշեցնում է Լեւոն Գ.ի և Կեռանի աղջիկներին, միայն ոչ նոյնչափ շքեղ, կամ նման է ներկայումս Ախալցխայի եւ աւելի մօտ Փամբակի կանանց գլխի զարդարանքին։ Նոյնն է եւ բռնաւորի կնոջ Տղատիկնոջ գլխի զարդարանքը, որ հրատարակել է Հայունին իւր Հայ Տարազի մէջ, եր. 218 եւ մենք Իգնատիոս Մանրանկարիչ եւ Շոթոռկանց Տոհմը աշխատութեան մէջ (Ատս, եր. 29)։ Ծառի վերայից աղջիկների հետ խօսող երիտասարդը ճիշդ նոյն զգեստն ու կօշիկներն ունի, ինչ որ ձուկ բերող Շերենիկն ունէր, միայն առանց գլխարկի և կողքից կախուած թաշկինակի, ասել է, թէ ուրոշ դասի երիտասարդներին յատուկ ըզգեստ էր այդ։ Երկրորդ ձիթենու վրայ եւս մի պատանի է բարձրացել եւ կացնով ճիւղեր է կտրատում. նա հագել է մինչեւ զօտին հասնող ելակ. նորա տակից ծալքաւոր բաճկոնակ, որ մինչեւ ծնկներն է հասնում, ապա նեղ եւ կարմիր անդրավարտիկ, ոլոքների մօտ սեղմ եւ զարդարուն, զուցէ և փաթթանով պատած. ոտքերը անկրունկ եւ առանց ճիտկի կօշիկ, զուցէ տրեխ։

Ամբողջ մանրանկարն առնուած է գընդակների շարքից բաղկացած և երկու գծով եզերուած շրջանակի մէջ։

Երկրորդ մեծ մանրանկարը 17 ա. (պատկեր 4) Ընծայականն է, 21 × 14 1/2 սն. մեծութեամբ. խմբանկարի կեդրոնում կանգնած է Յիսուս, իսկ կողքերից աւետարանն ընծայաբերող Սահակ Անեցին եւ իւր եղբայրը Առաքել։ Յիսուս երկու անգամ բարձրը է, քան կողքին կանգնած եղբայրները, մի միջոց նրա մեծութիւնը արտայայտելու, որ գործադրւում էր և բիւզանդական մանրանկարչութեան մէջ. հագել է նա երկար, մինչեւ բոբիկ ոտները հասնող տունիկայ. վերան ձգել է կարմիր երկար տոգայ ձախ թեւի վերայով, մի ծայրը մէջքին փաթթած և բռնած ձախ ձեռքում։ Նոյն ձեռքում բռնել է և կազմած, բաց աւետարան, ոսկի տառերով «Ես եմ լոյս աշխարհի, որ գայ առ իս ևն.» գրած. ոսկեզօծ են և աւետարանի թերթերի եզրները, կողքից կախուած են կազմի կոպիչները։ Աջով խաչակնքում է։ Մորուքը կարճ է և երկճիւղ, գլխի մազերը շագանակագոյն, որ իջնում են մէջքի վերայ և երեւում են կողքերից։ Բեխերը նուրբ և ծայրերը դէպի ցած թեքուած, շրթունքները կարմիր, բերանը կանոնաւոր, այտերը կեղրոնում թեթեւ կարմիր։ Խաղաղ աչքերը ուղղուած են դիտողին։ Դէմքի տպաւորութիւնը կենդանի է, բայց հանդարտ. գլխի շուրջը խաչազարդ, մեծ նիմբուս, կարմիր յատակի վերայ ոսկու փոշով ծածկուած։

Յիսուսի աջ կողմից կանգնած է մի զգեստաւորուած վեղարաւոր, որ վերան կապոյտ փիլոն է ձգել եւ որի առաջին քղանցքները շնորհալի կերպով ցած են իջնում, հայկական սովորութեան համեմատ. փիլոնի վերայից ձգուած է խաչազարդ եմիփորոն, ծայրերը ոսկեզարդով և ծոպերով վերջացած։ Երկու ձեռքով, կարմիր թաշկինակի մէջ բռնել է ոսկեզօծ աւետարան, որ մատուցանում է Յիսուսին։ Հագել է սեւին մօտեցող շապիկ, երկար՝ մինչեւ կարմիր և անկրունկ կօշիկներով ոտները։ Մորուքը գորշ է եւ մեծ. բեխերը նոյնպէս ալեխառն. այտերը թեթեւ կարմիր, աչքերն ու յոնքերը սեւ և կանոնաւոր։ Վեղարը սուր և հայկական, փեշերն առնուած փիլոնի տակ։ Գլխի վերայ սեւ թանաքով և արեւելեան բոլորգրով գրուած է. «Ես. որդի ԱծՅ ընկալ զքո սուրբ զաւետարանս ի մեղապարտես Սահակայ իբրև զխերեւեշն այրոյն եւ ողորմեա»։

Ձախ կողմից ձեռքերն աղաչաւորի նման պարզած է համեմատաբար աւելի երիտասարդ մի ֆիգուր, հագել է զօտեւորած պարեգօտ, կամ երկար պատմուճան, կարմիր յատակի վերայ ոսկի ծաղիկներով. թեւերը չեն սեղմուած։ Կօշիկներն անկրունկ են, երկու կտորից, գծերով իրարից որոշուած, նման 8բ–ի Շերենիկի կօշիկներին, միայն առանց ծոպերի։ Մորուքը մեծ է, ծայրից փոքր ինչ ճեղքուած և արդէն սպիտակել